

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
Ապրանքի ծագման տեղանուններ**

Գրանցման համար	9
Հայտի համար	2014004
Հայտի ներկայացման թվականը	29.05.2014
Հայտատուն (հայտատուները)	“Գինու ազգային գործակալություն” հանրային իրավունքի իրավաբանական անձ , GE “NATIONAL WINE AGENCY” LEGAL ENTITY UN DER PUBLIC RIGHTS, GE
Ծագման երկիրը	GE
Հայտարկվող տեղանունը	ԽՎԱՆՉԿԱՐԱ, ХВАНЧКАРА, KHVANCHKARA, ՆՅԱՆՔՅԱՐՏ

ԱԾՄԴ-ի դասը 33
Ապրանքի տեսակը կամ կոնկրետ ապրանքը գինի

Ապրանքի հատուկ որակի նկարագրությունը՝

«Խվանչկարա»՝ ծագման տեղանվամբ վերահսկվող կարմիր բնական-կիսաքաղցր վրացական բարձրորակ գինի: Արտադրվում է Ալեքսանդրոպոլի և Մուջուրեթուլի տեսակի խաղողից:

«Խվանչկարա» գինին բնութագրվում է մուգ-կարմիր գույնով, ունի ներդաշնակ, թավշյա, նրբաճաշակ, հաճելի համ՝ մրգային երանգներով և տեսակային բույրով:

«Խվանչկարա» գինու քիմիական տվյալները պետք է համապատասխանեն հետևյալ ցուցանիշներին՝

սպիրտի ծավալային պարունակությունը՝ 10,5-12 %

շաքարի զանգվածային խտությունը՝ 30-50 գ/դմ³

տիտրվող թթվայնությունը՝ 5-7 գ/դմ³

ցնդող թթվայնությունը՝ 1,2 գ/դմ³ ոչ ավել

էքստրակտի զանգվածի հասցված խտությունը՝ 20 գ/դմ³ ոչ պակաս

ծծմբի երկօքսիդի ընդհանուր զանգվածի խտությունը՝ 210 մգ/դմ³ ոչ ավել

ազատ ծծմբի երկօքսիդի խտությունը՝ 30 մգ/դմ³ ոչ ավել:

Կապն աշխարհագրական ծագման հետ՝ ծագման տեղանվան կամ աշխարհագրական նշման դեպքում՝

«Խվանչկարա» միկրոգոտում հումքային բազայի մակերեսները կազմում են մոտ 903 հա: Այստեղից Ալեքսանդրոպոլին և Մուջուրեթուլին կազմում են 40%, այսինքն՝ մոտ 360 հա:

Միկրոգոտում ստացված բերքը միջինում կկազմի 2520 տոննա: Մեկ տոննայից 65 դեկալիտր արտադրողականության պարագայում կարող է արտադրվել 163 000 դեկալիտր գինեջուր:

«Խվանչկարա» միկրոգոտու յուրահատուկ աշխարհագրական դիրքը՝ ստեղծված միկրոկլիման, ժայռերով պաշտպանված ավազանում, Ռիոնի գետի մոտ իջնող լանջերին, հումուսով հարուստ ավազոտ-քարքարոտ հողը, կվարցիտով և կրաքարով, ջերմության կլանման և սառեցման բարձր ունակությամբ օժտված, Ալեքսանդրոպոլի և Մուջուրեթուլի բնիկ տեսակների եզակիությունը և արտասովոր տեխնոլոգիաները բնորոշում են «Խվանչկարա» գինու յուրահատուկ առանձնահատկությունները:

Աշխարհագրական գոտին՝ Խվանչկարա խաղողագործության յուրահատուկ գոտին գտնվում է Ռաչայում, Ամբրուլաուրի վարչական շրջանում, Լեչխումսկի ժայռի հարավային լանջերի այն մակերեսների վրա, որոնք գտնվում են 42°30՝ հյուսիսային լայնության և 43°00՝ արևելյան երկայնության միջև: Արդյունաբերական խաղողի այգիները հիմնականում գտնվում են ծովի մակերևույթից 450-750 մետր բարձրության վրա: Միկրոգոտին տարածվում է Ռիոնի գետի աջ ափով 35-40 կմ կիրճի երկայնքով ըստ լայնության, այն ավազանում, որը պաշտպանված է բարձր ժայռերով: Խաղողի այգիներ հանդիպում են նաև Ռիոնի գետի ձախ ափին՝ Ռաչին ժայռի հյուսիսային լանջին:

«Խվանչկարա» գինու միկրոգոտին ընդգրկում է գյուղեր, որոնք գտնվում են Խվանչկարա գյուղի անմիջական մոտակայքում՝ Ցնսի, Կվացխուբի, Սադմելի, Գվիարա, Բոստանա, Դիդի Չորջո, Պատարա Չորջո, Մեորե Թուլա, Պիրվելի Թուլա, Չրեբալո, Չկվիշի, Ժոշխա, Կվիշարի, Գվարդիա, Բարեուլի, Գադիշի, Բաջի, Բուգեուլի, Սակեցիա, Ջվարիսա, Իցա, Կրիխի, Ախալսոպելի, Գորի, Խիմշի, Աբանոետի: Մի քանի տարի է, ինչ «Խվանչկարա» գինենյութ կարելի է ստանալ Ցագերսկի շրջանի Ալպանասա և Օրբելի գյուղերում: